ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

**ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ**

**2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

# ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**Կազմել է՝ համայնքի ղեկավար** ____________________ /Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ/

**Հաստատվել է՝** Քարակերտ **համայնքի ավագանու**
**<<21>> Դեկտեմբեր 2016թվականի թիվ 59-Ն որոշմամբ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. Համայնքի իրավիճակի գնահատում 3

*1.1 Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ 4*

*1.2 Ժողովրդագրություն 4*

*1.3 Տեղական ինքնակառավարման մարմիններ 5*

*1.4 Համայնքի ձեռնարկություններ 5*

*1.5 Առողջապահական հիմնարկներ 5*

*1.6 Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն 6*

*1.7 Գյուղատնտեսություն 7*

*1.8 Բնակտնտեություն 8*

*1.9 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն 9*

*1.10 Առևտուր և սպասարկում, գովազդ 9*

*1.11 Կրթություն 9*

*1.12 Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ 10*

*1.13 Ֆիզկուլտուրա և սպորտ 10*

*1.14 Համայնքի ուժեղ կողմերը և հնարավորությունները 11*

*1.15 Համայնքի թույլ կողմերը 11*

*1.16 Համայնքի հիմնական բարենպաստ փոփոխությունները և հնարավորությունները 11*

2. Համայնքի տեսլականը, ռազմավարությունը և համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիմնական նպատակները

*2.1 Համայնքի տեսլականը 12*

*2.2 Համայնքի զարգացման ռազմավարությունը 12*

*2.3 Քարակերտ համայնքի զարգացման 2017-2021 թվականների հիմնական նպատակները*

3. Համայնքի տարածքում նախատեսվող(շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր ու միջոցառումներ 13

4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում 14

5. Ոլորտային ծրագրեր 20

*5.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն 20*

*5.2 Գյուղատնտեություն 20*

*5.3Բնակտնտեսություն 21*

*5.4 Կրթություն 22*

*5.5 Ֆիզկուլտուրա և սպորտ 22*

*5.6 Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն 23*

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ համայնքի 2017-2021 թթ. հնգամյա զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և հիմնական նպատակների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական,սոցիալական,շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմը, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## *1.1 Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ*

Քարակերտ համայնքը գտնվում է մարզկենտրոնից հարավ արևմուտք 24 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաքից՝70կմ, Բաղրամյանի շրջկենտրոնից 23կմ: Քարակերտի ընդհանուր վարչական տարածքը կազմում է 3603հա, բնակեցված տարածքը 220.0հա չկան գետեր և լճեր, ծովի մակերևույթից գտնվում է 1100մ բարձրության վրա, օդի միջին ջերմաստիճանը տատանվում է -22-25, բացարձակ մինիմումը -20, մաքսիմումը՝ +38+40: Վերջին 15 տարիներին բարձրացել է կարկտահարության, ուժեղ քամիների ուշ գարնանային ցրտահարությունների հաճախականությունը, որոնք վնաս են հասցնում գյուղատնտեսությանը:
Համայնքի տարածքով են անցնում Երևան-Արմավիր-Գյումրի-Թբիլիսի երկաթուղային և ավտոմոբիլային մայրուղիները:

Արմավիրի մարզի Քարակերտ գյուղը, նախկինում Ղարաբուռուն, 1950թ-ից՝ Կարմրաշեն,1965թ-ից՝ Քարակերտ հիմնադրվել է 1902թ-ին:
1958թ-ին Ախուրյանի ջրամբարի կառուցման շնորհիվ հիմնվում է Կարմրաշենի այգեգործական սովխոզը, որը ընդմիշտ փոխում է գյուղի տնտեսական վիճակը և նպաստում գյուղի բնակեցմանը:
Բնակվայրը նախկինում պատկանել է Թալինի շրջանին, իսկ 1983 թ-ից նորաստեղծ Բաղրամյանի շրջանին:
Գյուղի հիմնական բնակեցումը սկսվել է 1950թ-ից Թալինի և Արթիկի շրջանների բարձրադիր գյուղերից,իսկ 1960թ-ից նաև Ջավախքից: Բնակչության թիվն աճում է 1965 թ-ին Սիրիայից, 1967-68թթ-ին Իրանից ներգաղթած հայրենադարձների թվով: Ազգաբնակչության 85% -ը հայեր են իսկ մնացած մասը եզդիներ: Բնակավայրում առկա են պատմա-մշակույթային տարածքներ, չկան եկեղեցիներ:

## *1.2 Ժողովրդագրություն*

Համայնքի բնակչության բաշխումը ըստ հետևյալ տարիքային խմբերի (մարդ).

| | Արական | Իգական | Ընդամենը |
|---|---|---|---|
| մինչև 1 տարեկան | 15 | 12 | 27 |
| 1-2 տարեկան | 58 | 57 | 115 |
| 3-4 տարեկան | 63 | 57 | 120 |
| 5-6 տարեկան | 69 | 56 | 125 |
| մինչև 6 տարեկան | 205 | 182 | 387 |
| 7-10 տարեկան | 126 | 94 | 220 |
| 11-14 տարեկան | 140 | 115 | 255 |
| 15-17 տարեկան | 103 | 83 | 186 |
| մինչև 16 տարեկան | 574 | 474 | 1048 |
| մինչև 18 տարեկան | 621 | 497 | 1118 |
| 18-22 տարեկան | 205 | 193 | 398 |
| 23-45 տարեկան | 992 | 949 | 1941 |
| 46-62 տարեկան | 504 | 489 | 993 |
| 63 և ավելի տարեկան | 173 | 246 | 419 |

*Աղբյուրը՝ համայնքների տվյալների հավաքագրման բազա՝ առ 01.10.2016 թվական:*

## *1.3 Տեղական ինքնակառավարման մարմիններ*

### ՏԻՄ-ի կառավարումը

Համայնքի ավագանու անդամների թիվը - 9
համայնքի ղեկավարի աշխատակազմում ընդգրկված են 1 հայեցողական պաշտոն, կառուցվածքային ստորաբաժանումների 9 համայնքային ծառայող
համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը

### ՀՀ Արմավիրի մարզի Քարակերտի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝




Քարակերտ համայնքում գործում են համայնքային ենթակայության թվով 4 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ՝

1. <<Քարակերտի թիվ 1 մանկապարտեզ>>ՀՈԱԿ 14 աշխատակիցներով,
2. <<Քարակերտի թիվ 2 մանկապարտեզ>>ՀՈԱԿ 19 աշխատակիցներով,
3. <<Քարակերտի համայնքային կենտրոն>>ՀՈԱԿ 9 աշխատակիցներով,
4. <<Քարակերտի բժշկական ամբուլատորիա>>ՀՈԱԿ 12 աշխատակիցներով:

## *1.4 Համայնքի ձեռնարկություններ*

Համայնքում գրանցված են թվով 3 արտադրական ձեռնարկություններ՝ 55 աշխատատեղով:
Ըստ գործունեության բնագավառների՝
պահածոների արտադրամաս – 1
ալյուրի արտադրամաս - 1
կահույքի արտադրամաս – 1

## *1.5 Առողջապահական հիմնարկներ*

Համայնքում գործում է 1 առողջապահական կազմակերպություն /բուժամբուլատորիա/ 12 աշխատատեղով:

## *1.6 Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն*

### *Ջրամատակարարում և ջրահեռացում*

Ջրապահովվածության պայմաններով համայնքը, որպես տեխնիկական ջուր օգտագործում է համայնքում գտնվող խորքային հորի ջուրը կառուցված է 200խմ տարրողության ՕԿՋ և քլորակայան, համակարգերը կառավարվում է «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից: Վերջին տարիներին պետության և համայնքի միջոցներով փոխաարինվել են հին երկաթյա ջրագծերը նոր մետաղապլաստե ջրագծերով, որոնց շնորհիվ ջուրը առանց կորուստների հասնում է բնակչությանը, կան փողոցներ, որտեղ նույնպես պետք է փոխարինվեն նոր ջրագծերով :
Իսկ համայնքի բնակչությանը խմելաջուր բերվում է ցիստեռններով, Թալին քաղաքից, բնակչությունը այն գնում է 1լիտրը՝ 6.25դրամ :
Համայնքում միասնական ջրահեռացման համակարգ չկա, հարցը լուծվում է բնակիչների կողմից տեղային կոյուղի կառուցելու միջոցով :
Համայնքի գյուղնշանակության հողերը ոռոգվում են մեխանիկական եղանակով, Ախուրյանի ջրամբարից : Ոռոգման համակարգը կառավարվում է <<ՇԵՆԻԿ>> ՋՕԸ-կողմից :
Ոռոգման ջրի ներհամայնքային համակարգի մաշվածության պատճառով մատակարարումը հաճախ կատարվում է ընդհատումներով :

### *Էներգամատակարարում*

Քարակերտ համայնքի էներգահամակարգը կառավարվում է «Հայաստանի էլցանցեր» ընկերության կողմից:
Քարակերտ համայնքի գազամատակարարումը իրականացվում է «Գազպրոմ - Արմենիա» ընկերության կողմից:
2016 թվականի հոկեմբերի 1-ի դրությամբ Քարակերտ համյնքում գազաֆիկացվել են 608 բնակարաններ, որից՝ 32 բազմաբնակարան շենքերում և 576 առանձնատներում:

### *Արտաքին լուսավորություն*

2016թ.հոկտեմբերի 1-ի դրությամբ Քարակերտ համայնքում լուսավորվող փողոցների թիվը կազմել է ՝13, իսկ լուսավորության ցանցը՝ 9417 մ:

### *Հիմնախնդիրներ*

- Թվով 3 փողոցների արտաքին լուսավորության քանակի ավելացում

## ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Մ-9 պետական նշանակության ճանապարհը, որը անցնում է համայնքի տարածքով հիմնանորոգվել է 2015թվականին 3.7կմ երկարությամբ, նորմալ վիճակում պահելու անհրաժեշտ նախապայմանը նորոգման և պահպանման մշտական աշխատանքների իրականացումն է:
Համայնքի գյուղամիջյան ճանապարհները հիմնականում ծածկույթ չունեն, անձրևների սելաֆների ժամանակ առաջանում են փոսեր և երթևեկության և մարդկանց շարժը դժվարանցանելի է դառնում , այդ պատճառով գյուղամիջյան ճանապարհները մշտական ընթացիկ նորոգման կարիք են ունենում:
Քարակերտ համայնքի փողոցների և հրապարակների ընդհանուր մակերեսը կազմում է՝ 17 հա:

### Հիմնախնդիրներ

- Քարակերտ համայնքի գյուղամիջյան փողոցների անբարեկարգ վիճակ

## Աղբահանություն և սանիտարական մաքրում

Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպվում են համայնքապետարանի աշխատակազմի կողմից:
Աղբահանությունը կատարվում է 583 տնատիրություններից:

### Հիմնախնդիրներ

- Շահագործվող հատուկ նշանակության աղբահանող ավտոմեքենայի ֆիզիկական մաշվածություն

## 1.7 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

**Համայնքի գ/տ նշանակության հողերի բաշխվածությունը ըստ հետևյալ հողատեսքերի .**

| | Ընդամենը (հա) | որից՝ սեփականա-շնորհված (հա) |
|---|---|---|
| Վարելահող……………………….. | 803.59 | 726.97 |
| Պտղատու այգիներ……………… | 401.61 | 398.31 |
| Խաղողի այգիներ………………… | 110.58 | 110.58 |
| Խոտհարքեր………………………. | | |
| Արոտներ…………………………… | 1519.1 | 215.39 |
| Այլ գյուղատնտեսական հողեր (նշել)____________________ | 400.50 | 282.50 |

Համայնքի բնակչությունը հիմնականում մասնագիտացված են գյուղատնտեսության ոլորտում: Այս ճյուղը դարձել է համայնքի բնակչության և զբաղվածության եկամտի աղբյուրի ապահովման հիմնական միջոցը: Այգեգործությամբ զբաղվողները արտադրում են խաղող, ծիրան, խնձոր, սալոր,դեղձ:

Վերջին ժամանակներում աճել են բնական աղետները՝ ցրտահարություն, կարկուտ, որոնք մեծ վնասներ են հասցնում գյուղացիներին:

Համայնքի տարածքում տեղադրված են թվով 4 հակակարկտային կայաններ, որոնց շահագործումն իրականացվում է համայնքապետարանի միջոցներով, շահագործման շնորհիվ համայնքի մոտ 500հա հողատարածքներ պաշտպանված են կարկուտից:

Հողատեսքերի մեծ մասը վարելահողեր են, որոնք մշակելու համար գյուղատնտեսական աշխատանքների սեզոնին չեն բավականացնում տրակտորներն ու հողի մշակության համար անհրաժեշտ կցորդիչ-գործիքները: Ներկայումս համայնքում եղած տրակտորները գտնվում են անհատ տնտեսվարողների տնօրինման տակ, ֆիզիկապես ու բարոյապես մաշված են: Համայնքում և հարևան համայնքներում չկան խոտհնձիչներ, կոմբայներ, չի բավականացնում հակավորող տեխնիկան, այդ պատճառով սեզոնին համայնք են գալիս Շիրակի, Արագածոտնի մարզի համայնքներից գյուղ տեխնիկա որոնց կատարած աշխատանքների ինքնարժեքը բարձր է:

*Հիմնախնդիրներ*

- *Գյուղ տեխնիկայի ձեռք բերում*
- *Դաշտամիջյան ճանապարհների նորոգում*

## *1.8 Բնակտնտեսություն*

Համայնքի բազմաբնակարան շենքերի և բնակարանների թիվը

| | | քանակը, հատ | ընդհանուր բնակելի մակերեսը, մ$^2$ |
|---|---|---|---|
| 1 | Ընդամենը բնակարաններ | 200 | 6339 |
| 2 | 1 սենյականոց բնակարաններ | 92 | 1822 |
| 3 | 2 սենյականոց բնակարաններ | 50 | 1452 |
| 4 | 3 սենյականոց բնակարաններ | 54 | 2697 |
| 5 | 4 և ավելի սենյականոց բնակարաններ | 4 | 368 |

**Բազմաբնակարան շենքերը՝ ըստ կառուցման ժամանակի**

| | | շենքերի քանակը, հատ | դրանցում բնակարանների քանակը, հատ | ընդհանուր բնակելի մակերեսը, մ$^2$ |
|---|---|---|---|---|
| 1 | մինչև 10 տարի առաջ կառուցված | | | |
| 2 | 11-20 տարի առաջ կառուցված | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | 21-50 տարի առաջ կառուցված | 1 | 166 | 1656 |
| 4 | 50 և ավելի տարի առաջ կառուցված | 7 | 530 | 4683 |

**Համայնքում առկա առանձնատների (սեփական տների) քանակը _____766_______**

**Համայնքում առկա առանձնատների (սեփական տների)**
**ընդհանուր բնակելի մակերեսը _______155674_____ քառ.մ**

*Աղբյուրը՝ համայնքների տվյալների հավաքագրման բազա՝առ 01.10.2016 թվական:*

*Հիմնախնդիրներ*

- Բակային տարածքների անբարեկարգ վիճակ
- Խաղահրապարակների բացակայություն

## *1.9 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն*

Քարակերտ համայնքով է անցնում Երևան –Արմավիր-Գյումրի, հանրապետական ավտոճանապարհները և երկաթուղիները: Թալին-Քարակերտ- Թուրքիայի սահման միջպետական ավտոճանապարհը նույնպես անցնում է համայնքի տարածքով: Քարակերտ համայնքը շրջակա բնակավայրերի հետ կապված է միջհամայնքային նշանակության ճանապարհներով:

Համայնքի ուղևորատար հիմնական տրանսպորտի դերը ստանձնել են երթուղային միկրոավտոբուսները և երկաթուղային տրանսպորտը:

*Հիմնախնդիրներ*

- Երթուղիները սպասարկող կազմակերպությունների պատասխանատվության ցածր մակարդակ

## *1.10 Առևտուր և սպասարկում, զովազդ*

Համայնքի տարածքում առևտրի օբյեկտների
ընդհանուր թիվը կազմում է 17, այդ թվում՝
հասարակական սննդի խանութներ - 14
բենզինի լցակայաններ – 1
գազի լիցքավորման կետեր – 2

## *1.11 Կրթություն*

Համայնքում գործում են կրթական հաստատություններ, որից
միջնակարգ դպրոցներ – 2-ը՝ 530 աշակերտ, 101 աշխատատեղ

Համայնքում գործում են համայնքային ենթակայության 2 մանկապարտեզ, Մանկապարտեզ հաճախում են 150 երեխա: Աշխատում են 28 աշխատակից, որից մանկավարժներ են՝ 10-ը :

*Հիմնախնդիրներ*

- մանկապարտեզների շենքերի ընթացիկ վերանորոգում

## *1.12 Մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ*

Համայնքում գործում է 1 գրադարան: 2016թ.-ին համայնքապետարանի գրադարաններում առկա գրքերի քանակը կազմում է 8 հազ. կտոր: Ընթերցողների թիվը մեկ տարվա կտրվածքով կազմել է 1000 մարդ :

Համայնքում գործում է ,,Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան>> հոգևոր մշակութային դպրոց:

Համայնքում 17-30 տարեկան երիտասարդները կազմում են համայնքի բնակչության մոտ 20%-ը: Աշխատատեղերի բացակայության պատճառով նրանց մի մասը ստիպված բռնում է արտագաղթի ճանապարհը և ինքնահաստատվում օտար երկրներում:

Երիտասարդների համար աշխատատեղեր ստեղծելու և ժամանցային հետաքրքիր միջոցառումների կազմակերպման առումով համայնքապետարանի կողմից <<Քարակերտի համայնքային կենտրոն>> ՀՈԱԿ-ում ստեղծվել են համապատասխան պայմաններ :

Մշակութային հիշարժան տարեթվերին, տոներին և հիշատակի օրերին նվիրված միջոցառումները և հուշ-երեկոները.

- Ամանորյա միջոցառումներ
- Բանակի օր
- Եղեռնի զոհերի հիշատակի օր
- Կանանց միջազգային օր
- Հաղթանակի օր
- Երեխաների իրավունքների պաշտպանության օր
- Վերջին զանգ
- ՀՀ սահմանադրության օր
- Գիտելիքի օր
- Անկախության տոն
- Ուսուցչի օր
- Տարեմուտի երեկո

*Հիմնախնդիրներ*

- Երիտասարդների համար աշխատատեղերի բացակայություն
- Երիտասարդների համար ժամանցի կազմակերպման անբավարար վիճակ

## *1.13 Ֆիզկուլտուրա և սպորտ*

Համայնքն ունի մարզադահլիճ, որտեղ մարզվում են մոտ 95 մարզիկ, գործում է երկու մարզաձև, հունահռոմեական ըմբշամարտ, քինգ բոքս/
մարզիկները ՝ տարբեր տարիքային խմբերում ձեռք բերելով հաջողություններ, մրցաշարերում :

*Հիմնախնդիրներ*

- Մարզագույքի կարիք
- Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի արմատավորման ոչ բավարար մակարդակ

## *1.14 Համայնքի ուժեղ կողմերը և հնարավորությունները*

- Համայնքն ունի ավելի քան 341 բուհի շրջանավարտ տարբեր մասնագիտությունների:
- Համայնքով է անցնում Երևան-Գյումրի-Թբիլիսի ավտոմայրուղին և երկաթգիծը:
- Ոռոգման ջրի առկայությունը մեխանիկական եղանակով:
- ՀԷԿ-ի առկայություն:
- Ալրաղացի առկայություն:
- Խաղողագործություն և ծիրանագործություն:
- Երկու միջնակարգ դպրոցների գործունեություն:
- Հոգևոր մշակույթային կենտրոնի առկայություն:
- Վերանորոգված մանկապարտեզների գործունեություն:
- Վերանորոգված Համայնքային կենտրոնի գործունեություն:

## *1.15 Համայնքի թույլ կողմերը*

- Խմելաջրի բացակայություն
- Ներհամայնքային ճանապարհների վատ վիճակ
- Թվով 7 եռահարկ շենքերի վատ վիճակ/կոմունալ բոլոր հարմարություններից զուրկ/
- Գյուղմթերքների հումքի վերամաշակման բացակայություն
- Ֆինանսական վիճակից ելնելով կան չմշակվող հողեր, որը պատճառ է գյուղացու եկամուտների նվազեցմանը
- Գործազրկություն
- Հարկերի մուծման անբավարար վիճակ

## *1.16Համայնքի հիմնական բարենպաստ փոփոխությունները և հնարավորությունները*

Հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների հետ իրականացրած ծրագրերի փորձը և համագործակցության ապահովման փոխադարձ պատրաստակամությունը

Մեծ աշխատուժի առկայությունը

Տուրիզմի զարգացման համար նպաստավոր պայմանները

Համայնքային իշխանության կողմից ներդրողների համար ստեղծած նպաստավոր պայմաններ

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

### *2.1 Համայնքի տեսլականը*

**Համայնքի տեսլականն է՝**

Համայնքը դարձնել բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող բնակավայր: Մասնավորապես,

- Զարգացնել այգեգործությունը, իրագործել գյուղատնտեսական մթերքների՝ տեղում արտադրելու, վերամշակելու և սպառման շուկա ստեղծելու գաղափարը, աշխուժացնել երիտասարդական և մշակութային կյանքը:
- Քաղաք-գյուղ, գյուղ-գյուղ կապերը դարձնել սերտ և փոխկապակցված՝ համախմբված ընդհանուր նպատակի՝ համայնքի զարգացման և առաջընթացի գաղափարի շուրջ:
- Նպաստել գործարար միջավայրի բարելավմանը, խթանել ձեռնարկատիրությունը:

### *2.2 Համայնքի զարգացման ռազմավարությունը*

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում ընտրվել է համայնքի հնգամյա զարգացման հետևյալ ռազմավարությունը՝ *բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային, առողջ ապրելակերպի և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զբոսաշրջության զարգացման կենտրոն՝ մաքուր, բարեկարգ և գրավիչ:*

### *2.3 Համայնքի զարգացման 2017-2021 թվականների հիմնական նպատակները*

Ելնելով համայնքի տեսլականի և հնգամյա զարգացման ռազմավարության սահմանումներից Քարակերտ համայնքի զարգացման 2017-2021 թվականների հիմնական նպատակներն են

- համայնքային կառավարման որակի և արդյունավետության բարձրացում
- գյուղատնտեսության ոլորտում բարենպաստ պայմանների ստեղծում
- գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովում
- գործարար և զբոսաշրջային գրավչության ապահովում
- հարմարավետ տրանսպորտային ենթակառուցվածքի ապահովում և ուղևորատար տրանսպորտի զարգացման շարունակականության ապահովում
- սպորտի զարգացման և մասսայականացման նպաստավոր պայմանների ստեղծում, առողջ ապրելակերպի խրախուսում
- բակային տարածքների բարեկարգման միջոցառումների շարունակականություն, ժամանցի գոտիների ավելացում,
- մշակութային կյանքի զարգացումը, բարեփոխումը, ավանդույթների պահպանումը և խթանում

• սոցիալապես անապահով խավերին աջակցության կազմակերպում:

## 3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ Արմավիրի մարզի 2017-2021 թվականների պետական բյուջեների հաշվին Քարակերտ համայնքում նախատեսված է իրականացնել կապիտալ ծրագրեր

Ծրագրի հիմնական նպատակն է Քարակերտ համայնքի թվով 7 եռահարկ շենքերում ունենալ բնական գազի համակարգ:

Ծրագրի շրջանակներում նախատեսված Քարակերտ համայնքի թվով 7 եռահարկ շենքերում անցկացվող բնական գազի ցանցի կառուցումը թույլ կտա 200բնակարաններում ապահովելու բնական գազի սպառում բնակիչների կողմից:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 8000000 (ութ միլիոն) դրամ:

Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

Ծրագրի հիմնական նպատակն է Քարակերտ համայնքի հինգ հարկեր 1 շենքում ունենալ ջրի համակարգ:

Ծրագրի շրջանակներում նախատեսված Քարակերտ համայնքի Հինգ հարկեր 1 շենքում անցկացվող նոր ջրագծի կառուցումը թույլ կտա 32 բնակարաններում ապահովելու ջրամատակարարում:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 8000000 (ութ միլիոն) դրամ:

Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

# 4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ,ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

միավորը հազ. դրամ

| Հ/Հ | Մուտքերի անվանումը | 2015թ. փաստ. | 2016թ. նախատ. | 2016թ. փաստ. | 2017թ. նախատ. | 2018թ. կանխ. | 2019թ. կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | **ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ' ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*** | **93165.3** | **99277.3** | **87068.9** | **103405.6** | **103905.6** | **104405.6** | **104905.6** | **105405.6** |
| I. | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*** | **92757.0** | **99277.3** | **86863.3** | **103405.6** | **103905.6** | **104405.6** | **104905.6** | **105405.6** |
| 1. | **ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ** | **12596.9** | **14114.0** | **8865.5** | **16170.2** | **16670.2** | **17170.2** | **17670.2** | **18170.2** |
| 1.1 | **Գույքային հարկեր անշարժ գույքից** | **7192.9** | **9326.2** | **5066.8** | **10626.2** | **10626.2** | **10626.2** | **10626.2** | **10626.2** |
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 340.3 | 356.2 | 266.8 | 356.2 | 356.2 | 356.2 | 356.2 | 356.2 |
| | Հողի հարկ | 6852.6 | 8970.0 | 4800.0 | 10270.0 | 10270.2 | 10270.2 | 10270.2 | 10270.2 |
| 1.2 | **Գույքային հարկեր այլ գույքից** | **4725.6** | **4343.8** | **3370.4** | **5100.0** | **5600.0** | **6100.0** | **6600.0** | **7100.0** |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 4725.6 | 4343.8 | 3370.4 | 5100.0 | 5600.0 | 6100.0 | 6600.0 | 7100.0 |
| 1.3 | **Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ** | **678.4** | **444.0** | **428.3** | **444.0** | **444.0** | **444.0** | **444.0** | **444.0** |
| | Տեղական տուրքեր | 678.4 | 444.0 | 428.3 | 444.0 | 444.0 | 444.0 | 444.0 | 444.0 |
| 1.4 | **Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** |
| | Պետական տուրքեր | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** |
| 1.5 | **Այլ հարկային եկամուտներ** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** |
| | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** |
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** |
| 2. | **ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** |
| 2 | **Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** |
| 2.2 | **Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.3 | **Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ** | 78220.4 | 82868.5 | 75882.1 | 85235.4 | 85235.4 | 85235.4 | 85235.4 | 85235.4 |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 78220.4 | 82868.5 | 75882.1 | 85235.4 | 85235.4 | 85235.4 | 85235.4 | 85235.4 |
| բ) | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| գ) | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 1693.9 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| դ) | ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2.4 | **Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| ա) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| բ) | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3. | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3.1 | **Տոկոսներ** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3.2 | **Շահաբաժիններ** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3.3 | **Գույքի վարձակալությունից եկամուտներ** | 550.0 | 600.0 | 200.0 | 600.0 | 600.0 | 600.0 | 600.0 | 600.0 |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 550.0 | 600.0 | 200.0 | 600.0 | 600.0 | 600.0 | 600.0 | 600.0 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակայության վարձավճարներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3.4 | **Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **3.5** | **Վարչական գանձումներ** | **1389.7** | **1400.0** | **1620.9** | **1400.0** | **1400.0** | **1400.0** | **1400.0** | **1400.0** |
| | Տեղական վճարներ | **1389.7** | **1400.0** | **1620.9** | **1400.0** | **1400.0** | **1400.0** | **1400.0** | **1400.0** |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **3.6** | **Մուտքեր տույժերից, տուգանքներից** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Վարչական իրավախախտումների համետ ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **3.7** | **Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **3.8** | **Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **3.9** | **Այլ եկամուտներ*** | 0 | 294.8 | 294.8 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված' համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | 0 | 294.8 | 294.8 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **II.** | **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **1.** | **Հիմնական միջոցների իրացումից մուտքեր** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շարժական գույքի իրացումից մուտքեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2. | **Պաշարների իրացումից մուտքեր** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3. | **Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 4. | **Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Հողի իրացումից մուտքեր | 408.3 | 0 | 205.6 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

*) վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

# 5. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

## 5.1 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ

**« Եկեղեցու կառուցում »**

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. ***Ծրագրի նպատակը*** – կառուցել եկեղեցի

2. ***Ծրագրից ակնկալվող արդյունքները*** – համայնքում հոգևոր կայանքի զարգացում և արդյունավետության բարձրացում

3. ***Ծրագրի հիմնական շահառուները*** – համայնքի բնակիչներ

4. ***Ծրագրի ֆինանսական աղբյուրները***

ա) համայնքային բյուջե՝ – 6.000 (հազ. դր.)

բ) այլ՝54.000 (հազ. դր.)

***5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր***

| N | Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ | Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.) | Ցուցանիշեր | Թիրախային արժեքներ | | | | | սկիզբ | ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | | |
| | Նոր եկեղեցու կառուցում | 60000 | աշխատանքի ծավալ (%) | | 25 | 25 | 25 | 25 | 2018 | 2021 |

5.2 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ

**« Դաշտամիջյան ճանապարհների նորոգում »**

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. ***Ծրագրի նպատակը*** –ունենալ դաշտամիջյան որակյալ ճանապարհ

2. ***Ծրագրից ակնկալվող արդյունքները*** – հողօգտագործողներին առանց խոչընդոտների և դժվարությունների հասնել հողատարածքներ

3. ***Ծրագրի հիմնական շահառուները*** – հողոգտագործողներ, գյուղմթերք գնորդներ

4. ***Ծրագրի ֆինանսական աղբյուրները***

ա) համայնքային բյուջե՝ – 5.000 (հազ. դր.)

բ) այլ՝ (հազ. դր.)

***5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր***

| N | Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ | Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.) | Ցուցանիշեր | Թիրախային արժեքներ | | | | | սկիզբ | ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | | |
| | Դաշտամիջյան ճանապարհների նորոգում | 5000.0 | աշխատանքի ծավալ (%) | 20 | 20 | 20 | 20 | 20 | 2017 | 2021 |

**« Գյուղ տեխնիկայի ձեռք բերում, տրակտորային պարկի հիմնում »**

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. ***Ծրագրի նպատակը*** – Գյուղ տեխնիկայի ձեռք բերում, տրակտորային պարկի հիմնում

2. ***Ծրագրից ակնկալվող արդյունքները*** – ապահովել հողօգտագործողներին պայմաններ ժամանակին և ցածր ինքնարժեքով իրականացնելու գյուղատնտեսական գործունեությունը

3. ***Ծրագրի հիմնական շահառուները*** – համայնքի բնակիչներ

4. *Ծրագրի ֆինանսական աղբյուրները*
ա) համայնքային բյուջե՝ – 12000 (հազ. դր.)
բ) այլ՝68000 (հազ. դր.)
***5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր***

| N | Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ | Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.) | Ցուցանիշեր | Թիրախային արժեքներ | | | | | սկիզբ | ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | | |
| | Նոր գյուղ տեխնիկայի ձեռք բերում | 80000 | աշխատանքի ծավալ (%) | 20 | 20 | 20 | 20 | 20 | 2017 | 2021 |

## 5.3 ԲՆԱԿՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ

«Համայնքի 7 եռահարկ շենքերի գազաֆիկացում » .
(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. *Ծրագրի նպատակը* –Համայնքի 7 բազմաբնակարան շենքերի գազաֆիկացման աշխատանքներ
2. *Ծրագրից ակնկալվող արդյունքները* – թվով 200 բնակարաններ կունենան բնական գազ օգտագործելու հնարավորություն
3. *Ծրագրի հիմնական շահառուները* – բազմաբնակարան շենքերի բնակիչներ
4. *Ծրագրի ֆինանսական աղբյուրները*
ա) համայնքային բյուջե՝ – (հազ. դր.)
բ) այլ՝ 8.000 (հազ. դր.)
***5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր***

| N | Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ | Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.) | Ցուցանիշեր | Թիրախային արժեքներ | | | | | սկիզբ | ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | | |
| | Համայնքի 7 բազմաբնակարան շենքերի գազաֆիկացում | 8000.0 | աշխատանքի ծավալ (%) | 20 | 20 | 20 | 20 | 20 | 2017 | 2021 |

«Համայնքի հինգ հարկեր 1 շենքի նոր ջրագծի կառուցում » .
(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. *Ծրագրի նպատակը* –Համայնքի հինգ հարկեր 1 բազմաբնակարան շենքի ջրամատակարարման աշխատանքներ
2. *Ծրագրից ակնկալվող արդյունքները* – թվով 32 բնակարաններ կունենան ջուր ունենալու հնարավորություն
3. *Ծրագրի հիմնական շահառուները* – բազմաբնակարան շենքերի բնակիչներ
4. *Ծրագրի ֆինանսական աղբյուրները*

ա) համայնքային բյուջե՝ – (հազ. դր.)

բ) այլ՝ 8.000 (հազ. դր.)

***5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր***

| N | Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ | Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.) | Ցուցանիշեր | Թիրախային արժեքներ | | | | | սկիզբ | ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | | |
| | Համայնքի հինգ հարկեր 1 բազմաբնակարան շենքի նոր ջրագծի կառուցում | **8000.0** | աշխատանքի ծավալ (%) | **20** | **20** | **20** | **20** | **20** | **2017** | **2021** |

**«Խաղահրապարակների հիմնում և բակերի բարեկարգում»** .

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. ***Ծրագրի նպատակը*** – ստեղծել երեխաների համար զարգացման միջավայր
2. ***Ծրագրից ակնկալվող արդյունքները*** –առողջ ապրելակերպի խրախուսում, երեխաների ներդաշնակ զարգացում, բակերի բարեկարգում
3. ***Ծրագրի հիմնական շահառուները*** – համայնքի 3-ից 12 տարեկան երեխաները
4. ***Ծրագրի ֆինանսական աղբյուրները***

ա) համայնքային բյուջե՝ – 6000.0 (հազ. դր.)

բ) այլ՝ (հազ. դր.)

***5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր***

| N | Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ | Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.) | Ցուցանիշեր | Թիրախային արժեքներ | | | | | սկիզբ | ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | | |
| | Խաղահրապարակների հիմնում | **6000.0** | քանակ | **1** | **1** | **1** | **1** | **1** | **2017** | **2021** |

**«Համայնքի փողոցների անվանումների տեղադրում և տների համարակալում»** .

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. ***Ծրագրի նպատակը*** – ունենալ համայնքում ուղեցույց փողոցների և տների
2. ***Ծրագրից ակնկալվող արդյունքները*** –տեսանելի փողոցների անվանումներ և հասցեներ
3. ***Ծրագրի հիմնական շահառուները*** – համայնքի բնակիչներ , հյուրեր, զբոսաշրջիկներ
4. ***Ծրագրի ֆինանսական աղբյուրները***

ա) համայնքային բյուջե՝ – 2000.0 (հազ. դր.)

բ) այլ՝ (հազ. դր.)

***5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր***

| N | Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ | Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.) | Ցուցանիշեր | Թիրախային արժեքներ | | | | | սկիզբ | ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | | |
| | Շենքերի համարակալում և հասցեների տեղադրում | **2000.0** | աշխատանքի ծավալ (%) | | **25** | **25** | **25** | **25** | **2018** | **2021** |

«Համայնքի 7 եռահարկ և հինգ հարկեր 1 շենքերի մուտքերի բարեկարգում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. ***Ծրագրի նպատակը*** –Համայնքի 7 բազմաբնակարան և հինգ հարկեր 1 շենքի մուտքերի դռների տեղադրում և բարեկարգում

2. ***Ծրագրից ակնկալվող արդյունքները*** – թվով 8 բազմաբնակարան շենքեր կունենան բարեկարգ մուտքեր

3. ***Ծրագրի հիմնական շահառուները*** – բազմաբնակարան շենքերի բնակիչներ

4. ***Ծրագրի ֆինանսական աղբյուրները***

ա) համայնքային բյուջե՝ – 4000.0 (հազ. դր.)

բ) այլ՝ (հազ. դր.)

***5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր***

| N | Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ | Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.) | Ցուցանիշեր | Թիրախային արժեքներ | | | | | սկիզբ | ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | | |
| | Համայնքի 7 բազմաբնակարան շենքերի մուտքերի դռների տեղադրում և բարեկարգում | **4000.0** | աշխատանքի ծավալ (%) | **100** | | | | | **2017** | **2017** |

## 5.4 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ

« Կրթական միջավայրի պայմանների բարելավում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. ***Ծրագրի նպատակը*** –Բարելավել կրթական միջավայրը

2. ***Ծրագրից ակնկալվող արդյունքները*** – կրթադաստիարակչական պայմանների բարելավում

3. *Ծրագրի հիմնական շահառուները* – համայնքի բոլոր մանկապարտեզների երեխաները, երեխաների ծնողները և աշխատակիցները

4. *Ծրագրի ֆինանսական աղբյուրները*

ա) համայնքային բյուջե՝ – 6000.0 (հազ. դր.)

բ) այլ՝ (հազ. դր.)

***5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր***

| N | Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ | Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.) | Ցուցանիշեր | Թիրախային արժեքներ | | | | | սկիզբ | ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | | |
| | Համայնքի երկու մանկապարտեզների շենքերի ընթացիկ նորոգում | 6000.0 | Հազ. դրամ | 2000.0 | 2000.0 | 2000.0 | | | 2017 | 2019 |

## 5.5 ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐ

**« Մարզագույքի ձեռքբերում »**

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. *Ծրագրի նպատակը* –ստեղծել մարզումային լավ պայմաններ

2. *Ծրագրից ակնկալվող արդյունքները* – մարզական ցուցանիշների բարձրացում, մարզադպրոցներում պատանիների և երիտասարդների ներգրավվածության աճ, առողջ ապրելակերպ

3. *Ծրագրի հիմնական շահառուները* – համայնքի բնակիչներ, սպորտով հետաքրքրվողներ

4. *Ծրագրի ֆինանսական աղբյուրները*

ա) համայնքային բյուջե՝ – 2000.0 (հազ. դր.)

բ) այլ՝ (հազ. դր.)

***5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր***

| N | Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ | Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.) | Ցուցանիշեր | Թիրախային արժեքներ | | | | | սկիզբ | ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | | |
| | Մարզագույքի ձեռք բերում | 2000.0 | Հազ. դրամ | 1000.0 | 1000.0 | | | | 2017 | 2018 |

## 5.6 ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ

**« Ներհամայնքային ճանապարհների ընթացիկ նորոգում, աղբահանություն»**

Համայնքի փողոցների սանիտարական մաքրման, աղբահանության աշխատանքները

պատշաճ մակարդակով կազմակերպելու, ինչպես նաև գյուղամիջյան ճանապարհները որոնք հիմնականում ծածկույթ չունեն, անձրևների և հեղեղումների ժամանակ դառնում են անանցանելի և առաջանում է փոսալցման և հարթեցման պահանջ :

Համայնքի փողոցների սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար անհրաժեշտ է ձեռք բերել տրակտոր /JCB/, որը թույլ կտա նշված աշխատանքները

համայնքի միջոցներով պարբերաբար կարգավորել:

1. ***Ծրագրի նպատակը*** – ստեղծել բարենպաստ պայմաններ

2. ***Ծրագրից ակնկալվող արդյունքները*** – մաքուր, հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովում, զբոսաշրջության գրավչության ավելացում

3. ***Ծրագրի հիմնական շահառուները*** – համայնքի բնակիչներ

4. ***Ծրագրի ֆինանսական աղբյուրները***

ա) համայնքային բյուջե՝ – 24,500 (հազ. դր.)

բ) այլ՝ (հազ. դր.)

***5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր***

| N | Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ | Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.) | Ցուցանիշեր | Թիրախային արժեքներ | | | | | սկիզբ | ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | | |
| **1** | Գյուղամիջյան ճանապարհների ընթացիկ նորոգում | **10000.0** | Հազ. դրամ | **2000.0** | **2000.0** | **2000,0** | **2000,0** | **2000,0** | **2017** | **2021** |
| **2** | Տրակտորի ձեռք բերում /JCB/ | **14,500.0** | Հազ. դրամ | **2900.0** | **2900.0** | **2900.0** | **2900.0** | **2900.0** | **2017** | **2021** |

« **Փողոցային լուսավորություն**»

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. ***Ծրագրի նպատակը*** –համայնքի փողոցներն ապահովել լուսավորությամբ

2. ***Ծրագրից ակնկալվող արդյունքները*** –երեկոյան ժամերին մարդկանց անվտանգ տեղաշարժի ապահովում

3. ***Ծրագրի հիմնական շահառուները*** – համայնքի բնակիչներ

4. ***Ծրագրի ֆինանսական աղբյուրները***

ա) համայնքային բյուջե՝ – 5000.0 (հազ. դր.)

բ) այլ՝ (հազ. դր.)

***5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր***

| N | Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ | Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.) | Ցուցանիշեր | Թիրախային արժեքներ | | | | | սկիզբ | ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | | |
| **1** | Փողոցային լուսավորության կառուցում | **5000.0** | Հազ. դրամ | **1000.0** | **1000.0** | **1000.0** | **1000.0** | **1000.0** | **2017** | **2021** |